

ԿՐՕՆԱԿԱՆ

«Եւ զկէսն արար յաստուած դրօշեալ. եւ խոնարհեալ երկիր եպագ մմա. յաղօթս կայ առ նա եւ ասէ, Փրկեա զիս, զի աստուած իմ ես դու»:

(Եսայի 44:17)

Վստահ եմ, մեզմէ ոմանք կը վարուին Աստուծոյ հետ ճիշդ այնպէս ինչպէս ժամանակին կը վարուէին հին զգեստներ և ցնցոտիներ հաւաքող մարդուն հետ, այսինքն անոնք Աստուծոյ կու տան միայն կեանքի քուրջերը, աւելցութիւնները, այն բաները որոնք այլեւս մենք պիտի չգործածենք: Եւ այսպիսի պարագաներու մեր հաւատքը, կրօնքը եւս կը դառնայ պարզապէս մնացորդաց, աւելցութիւն կրօնք: Անշուշտ այս մէկը մարդկային մեղանշումի պատմութեան մէջ նոր երեւոյթ մը չէր, որովհետեւ սկսեալ Ադամի օրերէն, մարդ արարածը միշտ փորձած է կամ անտեսել զԱստուած և կամ այնքան նսեմացնել և անկարեւոր դարձնել, որ կարծէք Ան ոչ մէկ նշանակութիւն ունի մեր կեանքին մէջ: Եւ ճիշդ ասոր էր որ կ'ակնարկէր Եսայի Մարգարէ, երբ կը գրէր թէ ինչպէս մէկը անտառէն՝ գեղեցիկ եղեւնիի ծառէն կտոր մը կը կտրէ, ու անոր մէկ մասը կը գործածէ իր մարմինը ջերմացնելու, ուրիշ կտորով մը ան կը տաքցնէ իր կերակուրը, և մնացորդով արձան մը կը շինէ պաշտելու, և անոր ծնրադրելով կը պաշտէ ըսելով. «Փրկէ՛ զիս, որովհետեւ դուն իմ աստուածս ես»:

Որքա՛ն ճիշդ կը նկարագրեն այս բառերը արդի, ներկայ սերունդի մարդոց որդեգրած դիրքը կրօնքի նկատմամբ: Մենք կեանքը կ'առնենք իբր պարգեւ, սակայն առանց որեւէ պատասխանատուութիւններու անոր: Մենք յումպէտս կը վատենք մեր առողջութենէն ետք մեզի տրուած Աստուածային մեծագոյն պարգեւը՝ ժամանակը, կարծելով թէ մենք ստեղծած ենք զայն: Մեր տաղանդները կը գործածենք այնպէս, կարծէք թէ Աստուած գործ չունի անոնց հետ: Մենք ամբողջովին կ'անտեսենք Աստուծոյ ներդրումը մեր ամբարած նիւթական կարողութեան մէջ, և ճիշդ այնպէս ինչպէս մեր հին և անգործածելի զգեստները կու տայինք «ցնցոտիներու մարդուն», նոյնպէս Աստուծոյ կու տանք- այդ ալ եթէ տրամադիր ենք- մեր ժամանակին աւելցութիւնները, մնացորդացը մեր կարողութիւններուն և տաղանդին, և անպայման խեղերանքը մեր հարստութեան:

Մի՛ նմանիք այն մարդուն՝ որ տրամադիր էր Աստուծոյ տալ միայն իր ժամանակի աւելցութիւն և երբ օր մը իր եկեղեցւոյ հովիւը կը փորձէ համոզել զինք, որ միայն իր զաւակները կիրականօրեայ դպրոց բերելով չգոհանայ, այլ ինք եւս իր կարգին եկեղեցի մտնէր և մասնակցէր արարողութիւններուն: Սակայն անոր պատճառաբանութիւնները երկար էին. ան կ'ըսէր թէ ինք շատ ծանր կ'աշխատէր ընտանիքը պահելու համար, բայց Կիրակին իր միակ ազատ օրը ըլլալուն, ան կը նախընտրէր իր ուզածին պէս անցընել այդ օրը: Սակայն միշտ կը կրկնէր թէ ինք օր մը իր հովիւը անակնկալի պիտի բերէր եկեղեցի գալով, բան մը որ հոգեւորականին արեւան ճնշումը կը բարձրացնէր: Հաւանաբար ան չէր անդրադառնար թէ Աստուած իրեն տուած էր այն բոլոր ժամանակը որ ունէր, և արդէն ժամանակը ինքնին կու գար Աստուծմէ, և թէ Հայր Աստուած իրեն տուած էր օրուան բոլոր ժամերը և տարուան բոլոր օրերը, ճիշդ այնպէս ինչպէս տուած էր սուրբերուն: Սակայն անոր ժամանակի արժէքին սխալ ըմբռնողութիւնը

զինք կը մղէր Աստուծոյ յատկացնելու այն մի քանի վայրկեանները միայն, որոնք չէին խանգարեր իր անձնական կեանքի ժամանակացոյցը:

Մենք անպայման կ'ուզենք, որ մեր զաւակները դպրոցի մէջ յառաջագէտ ըլլան և չբացակային, բացի այն պարագայէն երբ իսկապէս հիւանդ են: Սակայն երբ կիրակին գայ և օդը քիչ մը խիստ կամ անհաճոյ ըլլայ, ու մեր զաւակը անտրամադիր դուրս գալու, մենք անմիջապէս տեղի կու տանք և տուն կը մնանք: Ահա հոս է, որ մեր զաւակներու միտքերուն մէջ կը հաստատուի այն գաղափարը թէ կրօնքն ու եկեղեցի յաճախելը պարզապէս քմահաճոյքի հարց է, յաւելուած մը կեանքի գրքին վրայ: Մենք պարտինք մեր զաւակներուն սորվեցնել բացարձակ անհրաժեշտութիւնը զԱստուած պաշտելու յատուկ ժամի մը: Ամերիկայի նախագահներէն՝ Քալվին Քուլիճ ըսած է. «Մարդիկ կը մեծնան միայն՝ երբ կ'աղօթեն»:

Որոշ է թէ մարդկութեան մեծ մասը Աստուծոյ կու տան իրենց կեանքի աւելորդ ժամերէն, կարծէք թէ եկեղեցին իրենց համար կեանքի դժուարութիւններէն և անհամութիւններէն խուսափելու միակ և կարճ միջոցն է: Երիտասարդ մը օր մը մօտենալով իր հովիւին կը խօսի իր կեանքի նպատակակէտին մասին, որ էր համալսարան երթալ և ճարտարապետ դառնալ: «Յետո՞յ» հարց կու տայ հովիւը: Ան կ'ըսէ, թէ կը ծրագրէր կառուցել հսկայ ու փառաւոր շէնքեր և դառնալ նշանաւոր: «Յետո՞յ» հարց կու տայ եկեղեցականը: «Պիտի ընտանիք կազմեմ, պիտի հարստանամ և ապա հանգստեան կոչեմ ինքզինքս»: «Յետո՞յ» դարձեալ կը հարցնէ եկեղեցականը, որուն երիտասարդը կը պատասխանէ ըսելով. «Կը հասկնամ թէ ի՞նչ ըսել կ'ուզէք, վերջը Աստուծոյ պիտի մօտենամ»: Բարի հովիւը ժպտալով կ'ըսէ. «Այդ բոլորը լաւ զաւակս, բայց կը խորհիմ թէ աւելի ճիշդ պիտի ըլլար եթէ ծրագիրդ հակառակ կողմէն սկսէիր: Նախ մօտեցիր Աստուծոյ և ետքը ամէն ինչ իր կարգին կը դրսեւորուի»: Տեսէք թէ մենք ինչպէս մեր տաղանդներուն և կարողութիւններուն մնացորդը կու տանք Աստուծոյ: Կեանքը ունի հիմնական երկու մօտեցումներ, զորս կարելի է իւրաքանչիւրը մէկ բառով արտայայտել. առաջինը՝ հեթանոսական մօտեցումն է, որ կ'ըսէ «ես ունիմ». «Ինչ որ իմն է ուզածս կ'ընեմ ատու, իմ մարմինս է, իմ ուղեղս է և իմ կեանքս, և ատոր համար միայն ես ինծի պարտական եմ»: Իսկ երկրորդը՝ Քրիստոնէական մօտեցումն է, որ կ'ըսէ «ես պարտական եմ, ես պատասխանատու եմ Աստուծոյ իմ ամէն ունեցածներուս համար»:

Մենք իբր Քրիստոնեաներ պարտինք ընդունիլ թէ մեր բոլոր ունեցած տաղանդները կը պատկանին Աստուծոյ: Հայր Աստուած մեզի կարողութիւններ տուած է դրամ շահելու, ստեղծագործելու և ատոնցմով մեր ընկերային շրջանակները զարգացնելու: Իւրաքանչիւր սրտի զարկ Աստուածային հրաշքն է մեր մէջ, և եթէ կեանքը Աստուծոյ մեզի տուած պարգեւն է, ուրեմն մեր ունեցած տաղանդներն ալ յատուկ նուէրներ են զորս Հայր Աստուած վստահած է մեզի: Շատեր, կ'ակնկալեն, որ եկեղեցիներ, մանաւանդ կիրակնօրեայ դպրոցներ իրենց զաւակներուն ջամբեն լաւագոյն, կարելի կրօնական կրթութիւնը, սակայն իրենք միշտ կը խուսափին իրենց զաւակները կրթելու պարտաւորութենէն: Այսպիսիները, ինքնավստահ կերպով, հազիւ տարին մի քանի անգամներ եկեղեցի կը յաճախեն, անշուշտ եթէ օդը ներէ և կամ ուրիշ ընկերներ չունին:

Շատեր ասոնցմէ կը պատճառաբանեն իրենց կարողութիւններու՝ մտային թէ ֆիզիքական, սահմանափակութիւնը: Սակայն հոս կ'արժէ յիշել մեր Տիրոջ Տաղանդներու Առակը (Մատթ. 25:14-30), ուր Աստուածորդին մէկ մնաս (դրամ) ունեցողէն կ'ակնկալէր նոյնը, ինչ որ հինգ մնաս ունեցողին տրուած էր: Երկու մնաս ունեցողը

երկու եւս վերադարձուց իր տիրոջ՝ ինչպէս հինգ մնաս ունեցողը ըրած էր, և Քրիստոս երկուքն ալ գնահատեց ըսելով. «Բարի արարեր ծառայ բարի և հաւատարիմ...»: Սակայն ան խստիւ յանդիմանեց մէկ մնաս ունեցող ծառան, որ մերժած էր օգտագործել իրեն տրուած մէկ դրամը: Այս պարագային անկասկած չենք կրնար առաքելներու նկարագիրը նմանցնել առակի մշակներուն, որովհետեւ անոնց կարողութիւններն ալ հաւասարապէս սահմանափակ էին, սակայն անոնք իրենց տրուած համեստ մնասները կրկինը և աւելիով վերադարձուցին Աստուծոյ:

Վերջապէս, թող վայրկեանի մը համար անդրադառնանք թէ մենք ինչպէս մեր նիւթական հարստութեանց մնացորդներն ու աւելցուքները կը յատկացնենք Աստուծոյ: Հրեաներ սորված էին Աստուծոյ յատկացնել իրենց տարուան առաջին բերքին տասանորդը, «Առաջին պտուղը այգիին»: Մենք՝ 21-րդ դարու սերունդը, գլխիվայր շրջած ենք Աստուծոյ մեր նուէրներ տալու սովորութիւնը, և մեր անմիջական և անհրաժեշտ ծախսերը հոգալէ ետք է միայն, որ կու տանք, այդ ալ եթէ բան մը մնացած է: Տասանորդը՝ յիշուած Հին Կտակարանի մէջ, Ս. Գրական ծրագիրն է յատկացնելու Աստուծոյ գործին (Բ. Օրինաց 14:22), (Ղեւտացւոց 27:30), և Քրիստոս կու գար Հին Կտակարանային այս խօսքերը վերահաստատելու Մատթէոսի Աւետարանով (Մատթ. 23:23):

Երբ մեր հունձքերուն և եկամուտներուն առաջին պտուղը կը յատկացնենք Աստուծոյ գործին և ոչ թէ աւելցած դրամէն տալ մաս մը, արդէն ինքնին կը հաստատէ թէ մենք զԱստուած նախամեծար կը համարենք և ոչ թէ մեր ողորմելի Ես-երը և կամ կեանքը: Աստուած նախահերթ նկատելը Աստուածորդւոյն ուսուցումներուն հիմքը կը կազմէր. «Նախ Աստուծոյ արքայութեան ձգտէ, և միւս բաները ինքնաբերաբար կու գան»: Քրիստոս գիտէր այն զօրաւոր զգացումը զոր մարդիկ կ'ունենային նիւթական ստացուածքներուն տալու նախապատուութիւնը նախքան Աստուծոյ արքայութիւնը, և ասոր համար Ան միշտ կը զգուշացնէր մեծահարուստները «Հեռու մնալ նիւթին այս մեղքէն» և «Գանձեր դիզել միայն երկինքի մէջ, ուր ոչ գողը կրնայ մօտենալ և ոչ ալ ցեցը կ'ապականէ»: Մեծահարուստը որ իր ամբարները և շտեմարանները լեցնելէ ետք կ'ըսէր ինքզինքին. «Հիմա որ ամէն ինչ ունիս, կե՛ր, խմէ՛ և ուրախացի՛ր»: Քրիստոս յիմար անուանեց զայն: Յիսուս կը քննադատէր հարուստները ո՛չ թէ հարուստ ըլլալնուն համար, այլ որովհետեւ անոնք սխալ ձեւով կը մօտենային դրամին, հարստութեան և իրենց ինչքերուն: Մենք ինչ որ կու տանք Աստուծոյ մարդկութեան, այդ է որ կը պտղաբերի, նման ցորենի հատիկին՝ որ սերմանուելէ ետք միայն կու տայ արդիւնքը: Ինչ որ կը տրուի Աստուծոյ և մարդոց այդ միայն կը մնայ մեզի, իսկ մենք մեզի վերապահածը կը դառնայ բաժին մահուան և կը կորսուի, նման չշահագործուած և ի գո՛ւր վատնուած գանձին:

Անոնք՝ որոնց հոգիները մերկ են նման հրդեհուած անտառի ծառերուն, անոնք որոնք երբեք չեն զգացած քաղցր մխիթարութիւնը այդ գերագոյն զոհողութեան, հաւանաբար անոնք գերագոյն խենթութիւն նկատեն Այրի կնոջ արարքը, սակայն անոնք կը մոռնան որ այդ խենթութեան միջոցաւ էր, որ փրկուեցաւ մեր աշխարհը, և արդէն ի՞նչ կը նշանակէ խաչը, որ մեր եկեղեցիներու գմբէթներուն վրայ կը բանայ իր թեւերը, կարծէք ամբողջ աշխարհը գրկելու, եթէ ոչ գերագոյն զոհաբերութիւն, ուր ինքը՝ Աստուածորդին կու տար իր իսկ կեանքը փրկելու մարդկութիւնը: Մեր նախահայրերը շատ լաւ հասկցած էին իմաստը, այդ զոհաբերութեան, որուն համար ալ Քրիստոսի խաչը պահեցին իրենց սիրտերուն մէջ, և իբր հետեւանք ասոր օր մըն ալ իրենք իրենց կարգին ըրին այդ գերագոյն զոհողութիւնը: Այո՛, մեր եկեղեցիներու, դպրոցներու և ազգային հաստատութիւններու գոյութիւնը իրականացած է, Հայ այ-

րիններու լուծմաներով, որովհետեւ այն վայրկեանէն սկսեալ երբ ժողովուրդ մը դադրի գոհելէ իրեններուն համար, ան կը դադրի գոյութիւն ունենալէ:

Ուրեմն եթէ Հրեաներ հազարաւոր տարիներէ ի վեր Աստուծոյ կու տան իրենց եկամուտին տասանորդը, հետեւաբար Հայր Աստուած կ'ականկալէ, որ Քրիստոնեաներ եւս ետ չմնան անոնցմէ: Սակայն այն ինչ որ պիտի տանք Աստուծոյ, պէտք չէ ըլլայ մեքենական պարտականութիւն մը կատարողի ստիպողականութեամբ, այլ ընդհակառակը՝ պարտինք այդ ընել սիրով ու պատրաստակամութեամբ: Քրիստոս պախարակեց Փարիսեցիին որ կու տար, որպէսզի մարդիկ հիանային իր վրայ, սակայն գնահատեց Աղքատ Այրիին տուած շնչին գումարը, անոր տալու ձեւին համար, որովհետեւ ան տուաւ սիրտով, իր ամբողջ ունեցածը տուաւ: Եթէ մենք իսկապէս կը սիրենք զԱստուած և իր եկեղեցին, մանաւանդ մարդկային մեծ կարիքի այս օրերուն, պէտք է տալ ինչ որ կրնանք, մենք բացարձակապէս իրաւունք չունինք Աստուծոյ հետ վարուելու ցնցոտիներ հաւաքող մարդուն նման, տալով միայն մեր աւելցուքէն, այլ պարտինք տալ շուայլօրէն, ուրախութեամբ և սիրով:

Երիտասարդուհի մը, ժամանակին հինգ տարիներ միսիոնարական հաստատութեան մը մէջ ծառայելէ ետք, Ծննդեան գիշերը կը միանայ իր հարուստ ընտանիքին: Իր եղբայրն ու քոյրը երբ իրենց ծնողներուն կու տան թանկարժէք նուէրներ, այս խեղճ աղջիկը յուզուած կ'ըսէ. «Ես նախընտրեցի համեստ պայմաններով ապրիլ, դրամ չունիմ ձեզի սուղ նուէրներ գնելու, բայց փոքրիկ նուէր մը ունիմ», ու ան պարզ տուի մը բանալով մէջէն կը հանէ ձեռագործ, կարմիր բուրդով աշխատցուած սիրտ մը, փաթթուած դեղին ժապաւէնով, և կ'ըսէ ծնողներուն. «Ամբողջ ունեցածս, սիրտս ձեզի կու տամ»:

Մենք եւս նման այդ պարմանուհիին պարտինք ըսել. «Իմ Երկնաւոր Հօրս կու տամ բոլոր ունեցածս՝ Սիրտս»:

Ն.Ա.Մ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ան, որ բարիին հասկցողութիւնը չունի, ամէն ինչ վնասակար է իրեն:

Եթէ նկարիչ ըլլայի բարեգործութիւնը կը նկարէի քօղը դէմքին՝ իբրեւ ամօթխածութիւն, մատը շրթունքին՝ իբրեւ լուծիւն, իսկ երախտագիտութիւնը փողը բերնին՝ իբրեւ համբաւ:

Կեանքը առանց արուեստի, ամայութեան մէջ և անհունին դէմ ցցուած խարակն է, որուն կու գան զարնուիլ տգիտութեան և անճաշակութեան կոհակները:

Կեանք և արուեստ իրար ամբողջացնող երկու եզրեր են, այնքան մտերիմ իրարու, որ առանց մէկուն կարելի չէ ըմբռնել միւսը: Այս երկուքին համագործութեամբ է միայն, որ կարելի կ'ըլլայ կատարելագործել մարդուն գոյութեան իմաստն ու ձգտումը: